

**ԿԱՐԱԿԻԶ ԵՎ ՈՉ ԿԱՐԱԿԻԶ ՀԵԿԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊՈՒՄՈՎ  
ՀԱՄԱՑԱՐԱՅԻ ԻՐԱԿԻՑԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՒ:**

**THE EPIDEMIC SITUATION ON COMMUNICABLE AND NON-COMMUNICABLE  
DISEASES IN ARMENIA.**

**ЭПИДЕМИЧЕСКАЯ ОБСТАНОВКА ПО ИНФЕКЦИОННЫМ И НЕИНФЕКЦИОННЫМ  
ЗАБОЛЕВАНИЯМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ.**

**ՄԱՅԻՍ 2023**

**MAY 2023**

**МАЙ 2023**

## ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ՀԱՄԱՏԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

### **Աղիքային վարակիչ հիվանդություններ**

Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի մայիս ամսին աղիքային վարակիչ հիվանդություններով պայմանավորված համաճարակային իրավիճակը հարաբերականորեն հանգիստ է եղել:

2023 թվականի մայիս ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդության 795 դեպք, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ մոտ 1.3 անգամ քիչ է: 2023 թվականի մայիս ամսին Արարատի մարզի Արտաշատ քաղաքի 4-րդ մանկապարտեզի սաների շրջանում արձանագրվել է նորովիրուսով հարուցված աղիքային վարակիչ հիվանդությունների 1 բռնկում, հիվանդացել է 14 սան:

### **Սուր արտաընդերային վիրուսային հեպատիտներ**

Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի մայիս ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուր արտաընդերային վիրուսային հեպատիտների հիվանդացության ցուցանիշը աճել է 1-ով:

Սուր թվականի մայիս ամսին սուր արտաընդերային վիրուսային հեպատիտի 2 դեպք է արձանագրվել (2022 թվականին՝ 1 դեպք):

### **Քիմիական թունավորումներ**

2023 թվականի մայիս ամսվա ընթացքում արձանագրվել է քիմիական թունավորումների 245 դեպք, որոնց 40.4%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 59.6%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը 29.8%-ը՝ ալկոհոլային թունավորումներ են՝ ալկոհոլի բարձր չափաբաժինների ընդունման հետևանքով, 23.7%-ը՝ դեղամիջոցներով՝ ինքնարուժման, ինքնասապանության և ծնողի անուշադրության հետևանքով առաջացած, 18.8%-ը թունավոր կենդանիների խայթոցի

արդյունքում են, 13.5%-ը՝ օրգանական լուծիչների, մասնավորապես՝ շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից թունավորումներն են, 5.7%-ը՝ թունաքիմիկատներից, 4.9%-ն՝ օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցությունից, 2.9%-ն՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցությունից և 0.8%-ը՝ խոտաբույսերից:

2023թ. մայիս ամսին քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1.1 անգամ:

## **Սուր շնչառական վարակներ**

2023թ-ի մայիս ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է սուր շնչառական վարակներով պայմանավորված հիվանդացության 12.686 դեպք: Հիվանդացության ցուցանիշը կազմել է՝ 428,2, նախորդ ամսվա համեմատ հիվանդացությունը նվազել է 1,4 անգամ: Հիվանդացության ցուցանիշը համաճարակային շեմից ցածր է 1,2 անգամ: Ընդհանուր դեպքերի 74%-ը կազմում են 0-18 տարեկանները, իսկ 10%-ը՝ հոսպիտալացված դեպքերը: Ընդհանուր շտապ օգնության կանչերի 5%-ը կազմում են ՍՇՎ-ով պայմանավորված կանչերը:

ՀՀ-ում համաճարակաբանական հսկողության շրջանակներում լաբորատոր հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել են գրիպ Ա տեսակի H1N1 ենթատեսակի և H3 ենթատեսակի, գրիպ Բ տեսակի և SARS-CoV-2 հարուցիչներ: Հաստատվել է համակցված վարակ (գրիպ Ա/Բ+SARS-COV-2): Այլ շնչառական վարակներից հայտնաբերվել են ոինովիրուսի, ադենովիրուսի և պարագրիպի հարուցիչներ:

## **Կառավարելի վարակիչ հիվանդություններ**

2023 թվականի մայիս ամսին Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը բարենպաստ է եղել: Չեն գրանցվել պոլիոմիելիտի, դիֆթերիայի, կարմրախտի, համաճարակային

պարուտիտի դեպքեր: Արձանագրվել է կարմրուկի բերովի դեպք, որը տեղայնացվել է:  
Մայիսի 31-ի դրությամբ գրանցվել է կարմրուկի լաբորատոր հաստատված 195 դեպք:

## **EPIDEMIC SITUATION ON COMMUNICABLE AND NON-COMMUNICABLE DISEASES IN THE REPUBLIC OF ARMENIA**

### **Intestinal infectious diseases**

In May 2023, the epidemic situation on intestinal infectious diseases is relatively calm.

In May 2023, 795 cases of infectious intestinal disease were recorded in RA, which has been decreased by 1.3 times compared to the same previous year period. In May 2023,

In May 2023, 1 outbreak of intestinal infectious diseases caused by norovirus was recorded among the children of the 4th kindergarten in Artashat, Ararat rmarz, 14 children fell ill.

### **Parenteral acute viral hepatitises**

Compared to the same previous year period, the incidence rate of parenteral acute viral hepatitises increased by 1.

In May of the current year, 2 cases of parenteral acute viral hepatitises recorded, whereas 1 case - in the same period of the previous year.

### **Chemical poisoning**

245 cases of poisoning were registered during May 2023, 40.4% of which were registered in Yerevan, 59.6% - in marzes. 29.8% of the recorded cases are alcohol poisonings from ingestion of high doses, 23.7% - drug poisoning are the result of self-medication, suicide and parental neglect, 18.8% - from bites and stings of poisonous animals, 13.5% - from the toxic effects of organic solvents, in particular, carbon monoxide and other household substances, 5.7% - from pesticides, 4.9% - from toxic effects of soaps and detergents, 2.9% from the effects of other and unspecified toxic substances, 0.8% from herbs.

Compared to the previous year, in May 2023, the incidence rate of chemical poisoning increased 1.1 times.

### **Acute respiratory illnesses**

In May 2023 12 686 cases of acute respiratory illness were recorded (incidence rate: 428.2 per 100.000 population). Compared to the previous month, decrease by 1.4 times was recorded. The morbidity rate is 1.2 times lower than the epidemic threshold. 74% of the total cases are 0-18 years old, and 10% are hospitalized cases. 5% of the total emergency calls are the calls caused by ARI. According to the analysis by marzes Morbidity level is the highest in Ararat, Lori marzes and Yerevan. 65% of ARI cases were recorded among population aged 0-18 years. 6% of emergency calls are due to ARI.

As a result of laboratory research conducted in May 2023 within the framework of sentinel surveillance, influenza A virus H1N1 and H3 subtype and B virus, as well as the coronavirus disease SARS-COV-2 pathogens were found. A confirmed case of combined virus has been recorded (influenza A/B + SARS-COV-2). Among other respiratory viruses rhinovirus and paragrip viruses have been detected.

### **Vaccine-preventable infectious diseases**

In May 2023 the epidemic situation in the Republic of Armenia in terms of vaccine-preventable infectious diseases was favorable. No cases of poliomyelitis, diphtheria, rubella, epidemic parotitis were recorded. An imported case of measles was recorded, which has been localized. As of May 31, 195 laboratory-confirmed cases were recorded.

## **ЭПИДЕМИЧЕСКАЯ ОБСТАНОВКА ПО ИНФЕКЦИОННЫМ И НЕИНФЕКЦИОННЫМ ЗАБОЛЕВАНИЯМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

### **Кишечные инфекционные заболевания**

В Республике Армения эпидемическая ситуация, вызванная кишечными инфекционными заболеваниями, относительно спокойная.

В мае 2023 года было зарегистрировано 795 случаев кишечных инфекционных заболеваний, что в 1.3 раза меньше в сравнении с тем же периодом 2022г. В мае 2023 была зарегистрирована 1 вспышка кишечных инфекционных заболеваний среди детей детского сада N4 города Арташата Араратского марза, заболело 14 детей.

### **Острые парентеральные вирусные гепатиты**

В Республике Армения в мае 2023 года по сравнению с тем же периодом предыдущего года показатель заболеваемости острыми парентеральными вирусными гепатитами увеличился, в мае этого года было зарегистрировано 2 случая острого парентерального вирусного гепатита (в прошлом году – 1 случай).

### **Химические отравления**

В течение мая в Республике Армения было зарегистрировано 245 случаев химических отравлений, 40.4% из которых было зарегистрировано в городе Ереване, 59.6% - в марзах. Большинство зарегистрированных случаев – 29.8% - алкогольные отравления в результате приема высоких доз, 23.7% - отравление медикаментами в результате самолечения, с целью самоубийства и по невнимательности родителей, 18.8% являются следствием укусов ядовитых животных, 13.5% - от токсического воздействия органических веществ, в частности, угарного газа и других бытовых химических веществ, 5.7% - пестицидов, 4.9% - от токсического воздействия мыла и других моющих средств, 2.9% - в результате воздействия других и невыясненных токсических веществ, 0.8% - в результате приема в пищу различных трав и комнатных растений.

В мае 2023 года заболеваемость химическими отравлениями выросла в 1,1 раза по сравнению с тем же периодом предыдущего года.

### **Острые респираторные вирусные заболевания**

В мае 2023 года в Армении было зарегистрировано 12.686 случаев заболевания, обусловленного острыми респираторными инфекциями. Показатель заболеваемости составил 428,2, по сравнению с прошлым месяцем заболеваемость снизилась в 1,4 раза. Уровень заболеваемости ниже эпидемического порога в 1,2 раза. 74% от общего числа случаев приходится на детей в возрасте от 0 до 18 лет, а 10%-на госпитализированных. 5% от общего числа вызовов скорой помощи составляют вызовы, вызванные ОРВИ.

В рамках эпидемиологического надзора в результате лабораторных исследований были обнаружены возбудители подтипов H1N1 и H3 гриппа А, возбудители гриппа В, а также коронавирусного заболевания SARS-CoV-2. Подтверждена комбинированная инфекция (грипп А/B+SARS-COV-2). Из других респираторных инфекций были обнаружены возбудители риновируса, аденоноirusa и парагриппа.

### **Вакциноуправляемые инфекционные заболевания**

В мае 2023 года эпидемическая ситуация в Республике Армения по управляемым инфекционным заболеваниям была благоприятной. Случаев полиомиелита, дифтерии, краснухи, эпидемического паротита не зарегистрировано. Зарегистрирован завозной случай кори, который был локализован. По состоянию на 31 мая зарегистрировано 195 лабораторно подтвержденных случаев.